ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1962 Общественные науки

Շահրոյե Խուդո

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Երկրորդ համաշխարհային պատերազմում Սովետական Միության տարած պատմական հաղթանակը նպաստավոր պայմաններ ստեղծեց Արևելքի ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի համար։ Հարգացման նոր փուլի մեջ մտավ նաև քուրդ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը։ Քուրդ ժողովուրդը, որը Թուրքիայում, Իրանում և Իրաքում ենթարկվում էր դաժան ճնշման ու հալածանքի, բնականաբար չէր կարող չպայքարել իր ազգային իրավունքների ճանաչման համար։ Հիշյալ երկրների կառավարությունները մշտապես աշխատել են արյան մեջ խեղդել քրդական ազատագրական շարժման յուրաքանչյուր փորձ, մոռացության տալ «քրդական հարցի» գոյությունը։ 1945 թ. իրանական Ադրբեջանում և Քուրդիստանում ծավալված ազգային-ազատագրական շարժման կապակցությամբ իրանական ռեակցիոն «Թեհրանի Լմրուլ» թերթը գրում էր. «Հարկավոր է քրդերի բերանը երկաթ լցնել, ոչնչացնել քրդերին լեզվով նրանց հրատարակությունները»[1]։ Քուրդ ժողովրդի նկատմամբ ավելի դաժան քաղաքականություն է վարել և այժմ էլ վարում է թուրքական կառավարությունը։ Թուրքական պետության նոր ղեկավար Ջեմալ Գյուրսելը 1960 թ. օգոստոսին անդրադառնալով քրդական շարժումներին, ասաց. «Պատմությունն էլ ապացուցում է (?), որ քրդություն չկա, թրքություն (türkçülük) կա»[2]։ Իսկ թուրքական «Վաթան» թերթը նույն հարցի կապակցությամբ գրում էր. «Մեզանում «քուրդ» ասող մի բաժանում չկա։ Արևելքում թուրքերին չիոսող մի թուրքական զանգված կա. սակայն մեր թուրք ասելով նա թուրք չի դառնա... Մեր լեզվով չիոսող հայրենակիցը օրերից մի օր մեզ համար վտանգ է դառնալու։ Մենք պետք է աշխատենք մեր ամբողջ կարողությամբ նրան մեզ միացնել, սեփականացնել»[3]։ Սրանք Թուրքիայում և Իրանում քուրդ ժողովրդի նկատմամբ տարվող քաղաքականության շատ բնորոշ կողմերն են։ Թուրքիայի, Իրանի և Իրաքի կառավարությունները մեծ շահագրգռվածություն են հանդես բերել քրդական ազգային-ազատագրական շարժումները ճնշելու գործում՝ անկախ այն բանից, թե շարժումը տվյալ երկրներից որում է տեղի ունեցել։

1943—45 թթ. իրաքյան Քուրդիստանի հուժկու ապստամբությունը, ինչպես նաև 1945 թ. իրանական Քուրդիստանում ծավալված ազգային-ազատագրական շարժումը, վերոհիշյալ երեք շահագրգռված պետությունների համար,

---

[1] Rambout, Les Kurdes et le Droit. Paris, 1947, p. 82.
[2] „Akşam", 12. VIII. 1960.
[3] „Vatan", 31. VIII. 1960.

արմար առիթ դարձան քրդական շարժումների դեմ նոր միջոցառումներ իրականացնելու։

* * *

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ծավալված քրդական ազգային-ազատագրական շարժման պատմությունը ուսումնասիրելիս առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Թուրքիայի և Իրաքի կառավարությունների՝ այդ շարժումների դեմ ուղղված միասնական միջոցառումները։

Ծպատերազմյան քրդական ազգային-ազատագրական շարժումների ամենարնորոշ գծերից մեկը նրա հակաիմպերիալիստական բնույթն է։ Ներքին թուրքական, իրաքյան և իրանական ռեակցիայի դեմ մղած պայքարի հետ մեկտեղ, քրդական ազատագրական պայքարը հանդիսացել է այդ երկրների աշխատավորների ընդհանուր հակաիմպերիալիստական պայքարի մի մասը։ Եվ չնայած այն բանին, որ «քրդական հարցի» առկայությունը հաճախ ժխտվել է, իրականում այն շարունակ մտահոգել է շահագրգռված տերություններին։ Ահա թե ինչու, Թուրքիայի, Իրաքի և Իրանի կառավարությունները անկախ այն բանից պաշտոնական համաձայնություն եղել է նրանց միջև, թե ոչ, չնայած տարբեր բնույթի տարաձայնություններին, քրդական շարժումների դեմ պայքարելու հարցում մշտապես գործել են միասնաբար։

Արևմտյան իմպերիալիստական տերությունները և առաջին հերթին Անգլիան և ԱՄՆ-ը, օժանդակել և շատ հաճախ մասնակցել են հակաքրդական այդ միջոցառումներին, իհարկե, միաժամանակ չմոռանալով վարել իրենց տրադիցիոն քաղաքականությունը, որի էությունը հետևյալն էր. տվյալ երկրների կառավարությունների քաղաքականության վրա ճնշում գործադրելու նպատակով դատարկ, երբեմն նույնիսկ պրովոկացիոն խոստումներ տալ քրդերին։ Դեռ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Անգլիայի և ԱՄՆ-ի կառավարությունները մեծ խոստումներ էին տալիս քրդերին՝ նրանց ազգային իրավունքների ճանաչման վերաբերյալ։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ամբողջ Միջին Արևելքում տարածվում էին ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռուզվելտի լուսանկարները, որոնց վրա քրդերեն մակագրություն կար. «Մենք ձեզ չենք մոռանա»։ Անգլիական դիվանագետները մինչև իսկ հասան այնտեղ, որ խոստացան քրդերին դեպի ծով ելք տրամադրել Ալեքսանդրետի շրջանում[1]։ Սակայն, ինչպես և պետք էր սպասել, արևմտյան իմպերիալիստական տերությունները ոչ միայն մտադիր չէին հաշվի առնել քուրդ ժողովրդի ազգային իրավունքները, այլև թշնամական վերաբերմունք ցուցաբերեցին քրդական ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ։ Նրանց անհանգստացնում էր քրդական շարժման վտանգը ոչ միայն Իրաքում, այլև Թուրքիայում ու Իրանում։ Այս տեսակետից հատկանշական են արևմտյան մամուլի էջերում երևան եկած բազմաթիվ հոդվածներ։ Այսպես, 1946 թ. հունիսին, անգլիական «Ուորլդ Ռեվյու» թերթը քրդական հարցին նվիրած հոդվածներից մեկը վերնագրել էր «Եվս մեկ վտանգավոր կետ — Քուրդիստան»։ Արտահայտելով անգլիական իմպերիալիստական շրջանների վերաբերմունքը քրդական ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ, թերթն Արևելքում իմպերիալիստական լծի դեմ ըմբոստացող «վտանգավոր կետերից» մեկն էլ համարում

[1] «Balkan et Moyen-Orient», 28. IV. 1955.

էր Քուրդիստանը։ Այստեղ ընդգծված է արևմտյան, և մասնավորապես, անգլիական իմպերիալիզմի թշնամական դիրքը քրդական ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ։ «Քրդական շարժման ղեկավարները ձգտում են բոլոր քրդերի ազատագրման, իսկ դա կնշանակի նավթային բոլոր շրջանների ներդրավում Քուրդիստանի մեջ, որը ձեռնտու չի (ընդգծումը մերն է — Շ. Ա.) Անգլիային և նրա դաշնակիցներին»։ Իրաքի, Թուրքիայի ու Իրանի կառավարությունների և արևմտյան տերությունների՝ քրդական շարժումների դեմ ուղղված միասնական միջոցառումները շատ հաճախ պատճառաբանվում էին այն բանով, թե իբր «քրդական շարժումները հրահրվում են Մոսկվայի կողմից»։ Իմպերիալիստական շրջանների հնամաշ այս պրոպագանդայի առթիվ տեղին է հիշատակել քրդական գործիչներից մեկի խոսքերը, որը 1946 թ. մայիսի 20-ին հանդես գալով «Եգիպտական առաջադիմություն» հանդեսում, գրում էր. «Դարձել է կլասիկ ֆրազ, որ ուզում են «Մոսկվայի ձեռքը» տեսնել ամենուրեք, որտեղ կա դժգոհություն (ապստամբություն)։ Սա անազնիվ խաղ է։ Քրդերի ապստամբությունները Միջին Արևելքում անպայման ինքնուրույն են և իրենց էության մեջ սովետական ոչ մի ինտրիգ չունեն։ Ինչո՞ւ այս տագնապի պատճառները փնտրել այդքան հեռու։ Ինչո՞ւ ընկնել թակարդի մեջ։ Եթե կա ապստամբություն, ուրեմն կա դժգոհություն, և դժգոհ ու ճնշված ժողովուրդը կարիք չունի հրահանգներ ստանալ արտասահմանից, որպեսզի հռչակի իր իրավունքները»[5]։ Իրականում Թուրքիայի, Իրաքի, Իրանի և արևմտյան տերությունների ռեակցիոն շրջանների կողմից տարածվող այդ լուրերի նպատակը քրդական շարժումների դեմ ուղղված միջոցառումներն արդարացնելն էր։ Վերը հիշատակված «Ուորլդ Ռեվյու»-ն նույն ձևով արդարացնում էր, օրինակ, քրդական շարժումների դեմ ուղղված թուրք-իրաքյան 1946 թ. պայմանագիրը։ «Քրդերին շարժման մեջ դնելու ուղղված առաջին քայլը,— գրում էր թերթը,— Ուրմիո լճից Արևմուտք քրդական ինքնավար հանրապետության ստեղծումը եղավ (խոսքը Իրանում ստեղծված Քրդական ինքնավար հանրապետության մասին է.— Շ. Ա.)։ Քրդական «պիեմոնտի» ստեղծումից հետո հնարավոր կլինի Թուրքիայի և Իրաքի դեմ քրդերին ընդհանուր ապստամբության կոչել։ «Դրա համար էլ,— եզրակացնում է հոդվածագիրը,— հեշտ է հասկանալ, թե ինչու այս երկու երկրների կառավարությունները շտապեցին պայմանագիր կնքել, նպատակ ունենալով ստեղծել ընդհանուր ճակատ ընդդեմ ռուսների հնարավոր հարձակման, որի մեջ քրդերը կարող էին հրահրողի դեր խաղալ»[6]։

Այսպես ուրեմն, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո քրդական շարժումների դեմ ուղղված իրաքա-թուրքական համատեղ միջոցառումներն սկսվում են 1946 թ. կնքված գաղտնի պայմանագրից։ Իսկ ի՞նչպես կնքվեր այդ պայմանագիրը։ 1946 թ. փետրվարի 28-ին Նուրի Սայիդը մեկնեց Անկարա, պայմանագիր կնքելու վերաբերյալ թուրքական կառավարության հետ կոնկրետ բանակցություններ սկսելու համար։ Պատահական չէր այն հանգամանքը, որ հատկապես Նուրի Սայիդը ձեռնամուխ եղավ այդ գործին։ Հանձին նրա, հակաքրդական պայմանագրի կնքմանը ձեռնամուխ եղավ մի մարդ, որն իր մեջ ուրիշներից ավելի լավ էր մարմնավորում թուրք-իրաքյան մոլի ռեակ-

[5] „World Review", 14. VI. 1946.
[6] Rambout, p. 24.
[7] „World Review", 14. VI. 1946.

սիների և անգլիական խարդախ դիվանագիտության բոլոր գծերը։ Այդ մասին բավական հետաքրքրական ձևով է գրում ֆրանսիական հայտնի իրավագետ Ռամբուն իր «Քրդերը և իրավունքը» գրքում։ «Դժվար էր գտնել ավելի լավ դիվանագետ, որը կարողանար բանակցություններ վարել այդ հարցի շուրջը։ Նա, որն իրոք ծագումով քուրդ է... իսկ ազգությամբ իրաքցի, բազմիցս եղել է արտաքին գործերի մինիստր, չակերտավոր նշան է այն բանի, որ քրդերն արժանի են իրենց հարևաններին։ Վերջապես, նա անգլիացի է քաղաքականության մեջ, դա գաղտնիք չէ և հնարավորություն է տալիս մի անձի մեջ միավորել այնպիսի հատկություններ, որոնք առաջին հայացքից կարող էին հակասական թվալ։ Բոլորն արդեն կռահեցին, որ Անկարայում կխոսի ոչ քուրդը, ոչ էլ իրաքցին այլ, ըստ երևույթին, անգլիացին»[8]։

Չնայած հիշյալ բանակցությունների բուն նպատակը գաղտնի պահելու փորձերին, շուտով այն հայտնի դարձավ։ Անգլիական «Դեյլի Մեյլ» թերթի Երուսաղեմի թղթակիցը, անդրադառնալով վերոհիշյալ բանակցություններին, գրում էր, որ Թուրքիայի և Իրաքի միջև կնքված պայմանագրի պատճառներից մեկը «այն փաստն էր, որ Սաադաբադի պակտը, որը 1937 թ. կնքվել էր Թուրքիայի, Իրաքի, Իրանի և Աֆղանստանի միջև, անհաջողության մատնվեց, և վերջապես քրդական պրոբլեմի հետևանքով, որը քննարկվում էր Թուրքիայի և Իրաքի միջև՝ որպես Միջին Արևելքում խաղաղության համար ամենավտանգավոր սպառնալիքը»[9]։ Թուրքիայի և Իրաքի կառավարությունների քրդական ազգային-ազատագրական շարժումների դեմ ուղղված այդ համատեղ միջոցառումները գաղտնի պահելու նպատակով արված հայտարարությունները շատ հաճախ հակասական և անհամոզիչ էին։ 1946 թ. մայիսի 19-ին Արաբական Ինֆորմացիոն Գործակալության հաղորդման մեջ նշվում էր, որ այդ պայմանագիրը պարունակում է «վեց համաձայնագրեր ֆինանսական, արտաքին, սահմանային և դաստիարակության հարցերի մասին»։ Սակայն, իրականությունը այլ էր։ Շվեյցարական «Նեյե ցյուրխեր ցեյտունգ» թերթը խոստովանում էր, որ Թուրք-իրաքյան «կուլտուրական և տնտեսական համաձայնագրերից բացի, ըստ եղած տեղեկությունների, քննարկվել են նաև ռազմական գաղտնի պլաններ»[10]։ Իսկ Բեյրութում ֆրանսերեն լույս տեսնող «Բալկան է Մուայան Օրիան» բյուլետենի հոդվածներից մեկում որոշակիորեն նշվում էր, որ քրդական շարժումների դեմ պայքարելու համար Թուրք-իրաքյան 1946 թ. միջոցառումները թաքնվեցին «Տիգրիս գետի ջրերի բաժանման վրա հսկելու» մասին խոսակցությունների ետևում։ Բյուլետենի թղթակիցը գրում էր, որ այդ հարցի պարզաբանման համար նույն՝ 1946 թ. մարտի 29-ին, Անկարայի «Անկարապալաս» հյուրանոցում պրես կոնֆերանսի ժամանակ ինքը դիմել էր Նուրի Սայիդին հետևյալ խոսքերով. «Չէիք բարեհաճի դուք, պարոն մինիստր, մեկնաբանել այն լուրերը, որոնց համաձայն, մոտ ժամանակներս ստորագրված պայմանագրին կից լրացուցիչ արձանագրությունը վերաբերում է Թուրքերի և իրաքցիների համատեղ միջոցառումներին՝ ընդդեմ քրդերի, միջոցառումներ, որոնք երկու երկրների զինված ուժերին կթույլատրեն քրդերին հետապնդելիս անցնել նրանց պետությունների սահմանները», որին վերջինս պատասխանել էր, որ

---

[8] Rambout, p. 125.

[9] Նույն տեղում, էջ 24։

[10] „Нейе Цюрхер цейтунг", 6. XI. 1946.

«արձանագրությունը վերաբերում է միայն այն միջոցառումներին, որոնք պետք է անցկացվեն Տիգրիսի ջրերի վրա հսկողություն սահմանելու համար»[11]։

Թուրքիայի և Իրաքի կառավարությունների միջև կնքված այդ պայմանագիրը կոչվում էր «պայմանագիր Թուրք-իրաքյան բարեկամության և բարիդրացիական հարաբերությունների մասին»։ Չնայած պայմանագրի ռազմական բնույթը գաղտնի պահելու ջանքերին, այն ուժեղ դիմադրության հանդիպեց Իրաքում։ Իրաքի դեմոկրատական ուժերը չէին կարող լրջորեն ընդունել Տիգրիսի ջրերի բաշխման վրա վերահսկողություն սահմանելու մասին հավաստիացումները։ Թուրք-իրաքյան պայմանագիրը հնարավոր եղավ հաստատել միայն մեկ տարի հետո, 1947 թ. նոր՝ Սաիդ Ջաբրի կաբինետի կողմից։

Քրդական ազգային-ազատագրական շարժման դեմ պայքարելու Իրաքի և Թուրքիայի կառավարությունների համատեղ քաղաքականությունը իրականացվում էր տարբեր քողի տակ։ Եթե 1946 թ. այդ միջոցառումներն իրականացվում էին Տիգրիսի ջրերի վրա հսկողություն սահմանելու անվան տակ, ապա 1949 թվականին կյանքի կոչվեց «կոմունիզմի դեմ պայքարելու մասին» խրտվիլակը։ Թուրքիայի կառավարությունն այնքան էր շահագրգռված քրդական ազգային շարժումների դեմ պայքարելու խնդրով, որ երկրորդ պլանի վրա էր դրել իր, այսպես կոչված, «տերիտորիալ պահանջները» արաբական երկրների նկատմամբ։ Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ վճռական փոփոխություն տեղի ունեցավ միայն պատերազմի ավարտից հետո, երբ քրդերի ապստամբության կապակցությամբ նա «հարկադրված եղավ մերձենալ արաբական երկրների հետ»,— գրում էր «Նեյչ ցյուրխեր ցեյտունգ» թերթը, նշելով, որ 1949 թ. իրաքա-թուրքական «հակակոմունիստական» միջոցառումների իսկական նպատակը քրդական շարժումների դեմ պայքարելն էր, «Բալկան է Մուայան Օրիան»-ը գրում էր. «Կարելի է լավ ոսկեզօծել դեղահատը, բայց այս անգամ դժվար կլինի ստիպել կուլ տալու այն, քանի որ այն, ինչի մասին Կազասը (Իրաքի ներքին գործերի մինիստրը— Շ. Խ.) հայտարարում է «կոմունիզմի դեմ պայքարի կազմակերպում», այն, ինչը բարի ծերուկ Նուրին 1946 թ. մեր վզին փաթաթեց որպես «Տիգրիս գետի ջրերի վրա հսկողության սահմանում» համարվում է ոչ այլ ինչ, եթե ոչ քրդերի դեմ խտրական միջոցառումների ընդունում...»։ Թուրք-իրաքյան «հակակոմունիստական միջոցառումների» իսկական էության մասին նույն բյուլետենը գրում էր. «Դժվար է հասկանալ, թե թուրքական իշխանությունները հակակոմունիստական պայքարի բնագավառում ինչպես կարող են համագործակցել իրաքցիների հետ, երբ գրեթե բոլոր ոչ մեծաթիվ թուրքական կոմունիստները և նրանց համակրող անձնավորությունները գտնվում են բանտերում կամ Թուրքիայի սահմաններից դուրս։ Թուրքական և իրաքյան ղեկավարների համաձայնության միակ կետը,— ասվում էր այնուհետև,— այդ ժամանակ քրդերն էին, որոնց դեմ իրենց գաղտնային կամպանիան ավելի հաջող անցկացնելու համար նրանց (այսինքն քրդերին — Շ. Խ.) այդպիսի պատվավոր տեղ տվեցին հակասովետական պայքարի շրջանակներում»[12]։

Սովետական Միության ու սոցիալիստական բոլոր երկրների դեմ ագրեսիվ պատերազմ սանձազերծելու, ինչպես նաև Մերձավոր և Միջին Արևելքի

[11] „Balkan et Moyen-Orient", 16. VIII. 1955.

[12] Նույն տեղում։

երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները ճնշելու նպատակով 1955 թ. ստեղծվեց Բաղդադի ագրեսիվ պակտը։ Թվում էր, թե 1946 թ. թուրք-իրաքյան պայմանագրի՝ Իրաքում առաջ բերած դժգոհությունից և 1948 թ. անգլո-իրաքյան Պորտսմուտյան պայմանագրի խայտառակ ձախողումից հետո, որի դեմ ակտիվ ելույթներ ունեցան Իրաքի արաբ և քուրդ մասսաները, Իրաքի կառավարությունը չի դիմի հակաժողովրդական նոր ռազմական պակտ կնքելուն։ Լիբանանում լույս տեսնող «Օրիան» թերթը 1954 թվականի մարտի 17-ին այդ կապակցությամբ գրում էր. «Ինչ վերաբերում է թուրք-պակիստանյան դաշինքին Իրաքի մասնակցությանը, ապա քիչ հավանական է թվում, որ այն երբևէ կարողանար իրականանալ։ Դա կրորրոքեր կրքեր և առաջ կբերեր քաղաքական պառակտում այնպիսի երկրում, որի բնակչությունը բաղկացած է մի քանի փոքրամասնություններից, որոնցից յուրաքանչյուրն ունի ազգային տարբեր ձգտումներ»[13]։

Նախատեսվող ռազմական խմբավորման մեջ, որը ստեղծվում էր ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունների ջանքերով, մեծ ակտիվություն հանդես բերեցին նաև Թուրքիայի և Իրաքի կառավարությունները, որոնք այդպիսի ռազմական պակտը դիտում էին Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ազգային-ազատագրական շարժումները, այդ թվում նաև քրդական շարժումները, ճընշելու միջոց։ Նշելով, որ թուրքական կառավարությունը առանձնապես շահագրգռված էր այդ ռազմական պակտի ստեղծմամբ, Իրաքի «Սաութ ալ-Ահալի» թերթը 1954 թ. փետրվարի 18-ի համարում գրում էր. «Վաշինգտոնում արած իր հայտարարության մեջ Բայարը պահանջեց, որպեսզի ազատ աշխարհի ղեկավար գործիչները միջոցներ գտնեն ստիպելու Միջին Արևելքի երկրներին միանալ գործնականում արդեն ստեղծված պաշտպանական սիստեմին, նույնիսկ, եթե այդ քայլը արվի հակառակ Միջին Արևելքի ժողովուրդների կամքի... նույնիսկ, եթե դրա հետևանքով Միջին Արևելքի ժողովուրդները շղթայվեն ստորացման և ստրկության շղթաներով»։ Թուրքական կառավարողների նման քաղաքականությունը հետևանք էր մի կողմից արևմտյան իմպերիալիստական տերությունների և, առաջին հերթին, ԱՄՆ-ի հանդեպ նրանց մշտական լակեությյան, տերություններ, որոնք այնքան շահագրգռված էին ռազմական պակտերի ստեղծման գործում, մյուս կողմից՝ այդ շրջանի երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների հանդեպ ունեցած վախ։ Անհրաժեշտ է նշել, որ պատահական չէր այն ակտիվ դերը, որ խաղում էին Թուրքիայի և Իրաքի ղեկավարները այդ ռազմական դաշինքի ստեղծման գործում։ «Նուրի և ոչ թե Նասեր» վերնագիրը կրող հոդվածում անգլիական «Էկոնոմիստ» հանդեսի կողմից հրատարակվող գաղտնի «Ֆորին բիզնես» բյուլետենը այդ պակտի ստեղծման գործում Նուրի Սայիդի խաղացած դերի մասին գրում էր. «Արևմտյան տերություններն այժմ Նուրիին ավելի են պաշտպանում, քան երբևէ, որովհետև Նուրին, ինչպես այդ միշտ պահանջում էր Իրաքը, կողմնակից է արտաքին քաղաքականության մեջ ոչ նեղ-արաբական դիրքեր դրավելուն։ Բաղդադը արաբական միակ մայրաքաղաքն է, որն ավելի մոտ է ռուսական սահմանին, քան Տել-Ավիվին։ Իրաքը մշտապես ստիպված է եղել հաշվի առնել քրդական և թուրքական փոքրամասնությունները»[14]։

---

[13] „Orient", 17. IV. 1954.

[14] „Foreign Report", 12. IV. 1956.

Նախքան Բաղդադի պակտի վերջնական ձևավորումը, տեղի ունեցան ԱՄՆ-ի, Անգլիայի, Թուրքիայի և Իրաքի քաղաքական և ռազմական մի շարք գործիչների փոխայցելություններ, որոնց ընթացքում քննարկվում և համաձայնեցվում էին պակտի հիմքում դրվելիք հարցերը։ 1954 թ. սեպտեմբերին Իրաք ժամանեց ամերիկյան փոխգնդապետ Հենրի Վան-Օրմերը։ Իրաքի կառավարությունը նրան հանձնարարեց գլխավորել «զինվորական խորհրդականների վերահսկող խումբը»՝ ԱՄՆ-ից Իրաք բերվող «զենքերը ընդունելու և զենքից օգտվել սովորելու համար»։ Դրան անմիջապես հաջորդեց Նուրի Սայիդի և Ֆեյսալ II-ի ուղևորությունը Լոնդոն։ Իրաքում այդ ուղևորության մասին հայտարարվեց, որ դրա նպատակը 1930 թ. անգլո-իրաքյան պայմանագրի վերանայումն է, որի ժամկետը լրանում էր 1957 թ.։ Իսկ իրականությունն այն էր, որ Լոնդոնում քննարկվելու էր Իրաքի՝ թուրք-պակիստանյան դաշինքի մեջ մտնելու հարցը։ 1954 թ. հոկտեմբերին Նուրի Սայիդը մեկնեց Թուրքիա՝ տեղի կառավարության հետ հիշյալ հարցի մանրամասնությունները քննարկելու համար։ 1955 թ. հունվարին Բաղդադ ժամանեց թուրքական կառավարության ղեկավար Ադնան Մենդերեսը՝ նույն հարցի հետագա քննարկման նպատակով։

Նախապատրաստական լուրջ աշխատանքներից հետո Մերձավոր և Միջին Արևելքի երկու առավել շահագրգռված երկրները՝ Թուրքիան և Իրաքը, կնքեցին Բաղդադի պակտը, որին հետագայում միացան Պակիստանը, Անգլիան, Իրանը։ ԱՄՆ-ը ձևականորեն չէր մտնում պակտի մեջ, բայց փաստորեն մասնակցում և ղեկավարում էր նրա գործունեությունը, հատկապես տխրահռչակ «հակակոմունիստական քաղաքականության» գծով։ Իրաքի կառավարության ղեկավարները ցնծության մեջ էին ռազմական այդ պակտի ստեղծման առթիվ։ Նուրի Սայիդը պակտի կնքումից հետո հայտարարեց. «Դուք կտեսնեք, Բաղդադի պակտը կամրապնդվի բոլոր դեպքերում — կմեռնեմ ես, հրաժարական կտամ, թե իմ կառավարությանը հավատարմություն չեն հայտնի... Նախքան պակտի ստորագրումը ես հասա բոլոր նախկին պրեմիեր մինիստրների համաձայնությանը։ Պրեմիեր մինիստրներից յուրաքանչյուրը, որը կփոխարիներ ինձ, արդեն կապված կլինի այդ պակտի հետ»[15]։

Բաղդադի պակտի ստեղծման հիմնական նպատակներից մեկը Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների դեմ պայքարելն էր։ Պակտը ուղղված էր նաև քրդական ազատագրական շարժումների դեմ։ Նրա առաջին հոդվածում նախատեսված էր, որ ընդհանուր պարտավորություններից բացի «հնարավոր է երկկողմանի համաձայնագրեր կնքել նրա առանձին մասնակիցների միջև»։ Այս կետը մտցված էր հատկապես թուրքական կառավարության պնդումով։ Թուրքիան, ինչպես արդեն նշվեց, 1946 թ. Իրաքի հետ կնքել էր քրդական շարժումների դեմ համատեղ պայքարելու պայմանագիր։ Նա այժմ ուզում էր համանման նոր գործարք կնքել նաև Իրանի կառավարության հետ։ Պակտի մյուս անդամները «սեպարատիստական» այս միջոցառումների դեմ չէին առարկում, որովհետև գիտեին դրանց իսկական նպատակը։ Այնուհետև, առանց հապաղելու, թուրքական կառավարությունը սկսեց բանակցություններ վարել Իրանի հետ։ «Էկո Իրան» բյու-

[15] „Time", 9. I. 1956.

լետենն այդ առթիվ 1955 թ. հոկտեմբերի 11-ին գրում էր. «Իրազեկ շրջաններում հայտարարում են, որ այդ հոդվածի հիման վրա (Բաղդադի պակտի առաջին հոդվածի — Շ. Խ.) Իրանի և Թուրքիայի միջև տեղի են ունեցել բանակցություններ, որոնք, հնարավոր է, կհասցնեն այդպիսի համաձայնագրի կնքման ... Այդ շրջանների կարծիքով համաձայնագիրը կպարունակի գաղտնի հոդվածներ, որոնք կնախատեսեն համատեղ գործողություններ Իրանական Ադրբեջանի հյուսիսային սահմանների պաշտպանման, ինչպես նաև Իրանի, Իրաքի և Թուրքիայի կողմից Քուրդիստանի պաշտպանության նոր կարգի մասին»։

Ամերիկայի Միացյալ Նահանգները «հոգատարությամբ» իրենց վրա էին վերցնում Իրանի սահմանների պաշտպանությանը վերաբերող պարտավորությունները։ 1956 թ. հունվարին Բաղդադում տեղի ունեցան հիշյալ պակտի ռազմական օրգանների խորհրդակցություններ։ Դրանցից մեկին հրավիրված էին ԱՄՆ-ի, Անգլիայի և Միջին Արևելքի երկրների ռազմական ներկայացուցիչները, որտեղ ամերիկյան գեներալ Մակլյուրը խորհրդակցության մասնակիցներին զեկուցեց Իրանի բանակում տիրող դրության, դեպի Իրանական Ադրբեջան, Կասպիականի ափերը, Խորասան, Քուրդիստան և Լուրիստան կատարած իր ուղևորությունների մասին։ Այս խորհրդակցություններում ակտիվ կերպով քննարկվեցին ռազմական բնույթի հարցեր, որոնք վերաբերում էին պինված ուժերը Պակիստանից մինչև Թուրքիայի և Իրանի սահմաններն ընկած տերիտորիաների վրա տեղաբաշխելու մանրամասնություններին։ Միաժամանակ նախնական բանակցություններ տեղի ունեցան պակտի մասնակից երկրների զինված ուժերը իրանական տերիտորիա մտցնելու պայմանների շուրջ։ Հիշատակված տերիտորիաների մեծ մասը Իրանի, Թուրքիայի և Իրաքի քրդաբնակ շրջաններն էին։ 1956 թ. ապրիլին Թեհրանում կայացած Բաղդադի պակտի մասնակից երկրների արտաքին գործերի մինիստրների խորհրդի 2-րդ նիստում Միացյալ Նահանգները «այդ խորհրդի հրավերով պակտի տնտեսական և հակաքայքայիչ կոմիտեի անդամ դարձան, առանց պակտի իսկական անդամ դառնալու»[16]։ Պակտի գործունեությանն ԱՄՆ-ի մասնակցելը արդարացվում էր «կոմունիստական ներթափանցման վտանգի դեմ պայքարելու անհրաժեշտությամբ»։ 1957 թ. հունիսին Միացյալ Նահանգները Բաղդադի պակտի անդամ երկրների ներկայացուցիչների՝ Կարաչիում տեղի ունեցած նիստում արդեն մասնակցում էին ռազմական կոմիտեի աշխատանքներին, նորից ցուցադրելով իրենց «վճռականությունը օգնել պակտի երկրներին պայքարելու կոմունիստական ագրեսիայի որևէ սպառնալիքի դեմ, որը ուղղված կլինի նրանց տերիտորիաների ամբողջականության դեմ»[17]։ «Կոմունիստական ագրեսիա», «տերիտորիաների ամբողջականություն» և նման այլ ֆրազներով արդարացվում էին ռազմական այն միջոցառումները, որոնք ուղղված էին ազգային ազատագրական շարժումների դեմ։ Տվյալ դեպքում Թուրքիայի, Իրանի և Իրաքի կառավարություններին մատհոգում էին քրդական ազգային-ազատագրական շարժումները։

Բաղդադի պակտի մասնակիցների ներկայացուցիչների պարբերաբար հրավիրվող ընդհանուր նիստերից բացի, հաճախակի փոխայցելություններ էին

---

[16] „Department of state publication". Washington, 1958, 6572, p. 15.

[17] Նույն տեղում։

տեղի ունենում Իրաքի և Թուրքիայի կառավարությունների ներկայացուցիչների միջև՝ հակաքրդական միջոցառումներ իրականացնելու համար։ 1955 թ. օգոստոսի սկզբներին թուրքական մամուլը մի շատ աննկատ, փոքր ինֆորմացիայով հայտնում էր, որ իրաքյան ոստիկանության պետ Բախուշաթ աթ-Թիյախը կժամանի Ստամբուլ «ինտերպոլի» սեսիային մասնակցելու համար (ինտերպոլ—քրեական ոստիկանության միջազգային հանձնաժողով)[18]։ Մի քանի օր անց Ֆրանս Պրես գործակալությունը հաղորդում էր, որ Իրաքի ներքին գործերի մինիստր Սայիդ Կաբասը աթ-Թիյախի հետ միասին Բաղդադից Անկյարա էր ուղևորվել թուրքական ոստիկանության հետ բանակցություններ սկսելու նպատակով, «1946 թ. բարեկամության և բարիդրացիական հարաբերությունների մասին Թուրքիայի և Իրաքի միջև կնքված պայմանագիրը» կենսագործելու համար։ Այս ուղևորությունները, չնայած դրանց նպատակը քողարկելու փորձերին, իրականում վերաբերում էին քրդական շարժումների դեմ պայքարելու հարցին։ «Բալկան է Մուսյան Օրիան» բյուլետենի վկայության համաձայն, ի պատասխան Բաղդադի պակտի նկատմամբ քրդական հասարակայնության բացասական վերաբերմունքի՝ «նրանց դեմ նախապատրաստվում է նոր հարձակում ինչպես թուրք-իրաքյան, այնպես էլ իրաքա-իրանական և իրանա-թուրքական սահմանամերձ շրջաններում»[19]։ Նման գործողությունները քողարկելու համար Բաղդադում կառավարությունը լուրեր էր տարածում այն մասին, թե իբր ինքը «կուլտուրական հոգատարություն» է ցուցաբերում քրդերի նկատմամբ։ Իրականում սակայն Իրաքի ոստիկանական և ռազմական գործիչները հատկապես Անկարա էին մեկնում քրդերի դեմ իրականացվող միջոցառումների միասնական պլան մշակելու համար, իսկ Բաղդադում ի լուր ամենքի հայտարարում էին, որ մայրաքաղաքում առաջին անգամ ստեղծվում է քրդերեն լեզվի ուսումնասիրության կենտրոն։ «Սթեթ Բաղդադ,— գրում է թերթը,— անկեղծորեն ուզում էր զբաղվել քրդական կուլտուրայով, նա պետք է դադարեցներ պայքարը քրդական դպրոցների դեմ Իրաքյան Քուրդիստանում և, ընդհակառակը, օգներ նրանց զարգացմանը»[20]։

Արևմտյան իմպերիալիստական տերությունների սժանդակությամբ Թուրքիայի, Իրանի և Իրաքի կառավարությունները վարելով քրդական դեմոկրատական ուժերին հալածելու և հետապնդելու քաղաքականություն, առաջին հերթին իրենց հարվածներն ուղղում էին կոմունիստների և առավել աչքի ընկնող դեմոկրատ գործիչների դեմ։ «Օրյեկտը,— (այսինքն հետապնդումների հիմնական առարկան — Շ. Խ.), կլինեն առաջին հերթին կոմունիստները, բուրդ կոմունիստները (սա ինքնին հասկանալի է), սակայն, նմանապես և բուրդ նացիոնալիստները և պարզապես քրդերը, որոնց միակ մեղքն այն է, որ նրանք կոչվում են «քրդեր»։ Խոսքը վերաբերում է հակաքրդական օպերացիային, որտեղ քուրդ կոմունիստներին ցույց կտան ավելի մեծ ուշադրություն»[21]։ Այսպիսով, Բաղդադի պակտն իր սուր ծայրով ուղղված էր ոչ միայն Սովետական Միության և խաղաղասեր մյուս երկրների դեմ, որին մենք հանգամանորեն չանդրադարձանք, այլև Միջին և Մերձավոր Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի դեմ։

---

18 Balkan et Moyen-Orient", 16. VIII. 1955.

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում։

* * *

Ներկայումս Իրանում և Թուրքիայում բնակվող քուրդ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը այդ երկրների ժողովուրդների ընդհանուր պայքարի մի մասն է կազմում, որի հաղթանակով պայմաններ կստեղծվեին նրանց ազատ, դեմոկրատական զարգացման համար։ Իրաքի քուրդ աշխատավորները պայքարում են ռեսպուբլիկական կարգերի ամրապնդման, երկրի կյանքի դեմոկրատացման համար։ Ներպատերազմյան ժամանակաշրջանի քրդական ազգային-ազատագրական շարժման ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ այդ շարժման մոլի թշնամին է արևմտյան իմպերիալիզմը, որը բազմիցս աշխատել է «քրդական հարցը» ծառայեցնել իր դաղութակալական, իմպերիալիստական նպատակներին։